VEEV one

էլեկտրոնային սիգարետ

Օգտագործման Ուղեցույց



Նախապատրաստեք Ձեր VEEV ONE™ սարքը օգտագործման





VEEV ONE™ Փոդ
(վաճառվում է առանձին)



Type-C
Մարտկոցի Լար*

*Լիցքավորման օպտիմալ կատարման համար օգտագործեք միայն արտադրողի կողմից հաստատված լիցքավորման մալուխ (ներառված է տուփի մեջ) և վավերացված AC Power Adapter, որը պետք է ձեռք բերել վստահելի աղբյուրից:



ՄԻԱՑՆԵԼ

Սեղմեք և պահեք կոճակը 3 վայրկյան, ապա բաց թողեք: Կարգավիճակի լույսերը դանդաղ կմիանան: Կարող եք օգտագործել Ձեր VEEV ONE™ սարքը:



ՓՈԽԵԼ ՓՈԴԸ

Դուք կարող եք փոխել VEEV ONE™ փոդը, երբ Ձեր VEEV ONE™ սարքը միացված է: Երբ տեղադրեք VEEV ONE™ փոդը, կարգավիճակի լույսերը դանդաղ կմիանան: Դուք կարող եք օգտագործել Ձեր VEEV ONE™ սարքը:



ԱՆՋԱՏԵԼ

Դուք կարող եք անջատել սարքը՝ սեղմելով և պահելով կոճակը 3 վայրկյան:



ՍԽԱԼԻ ՆՇԱՆ

Ներքևի լույսը կարմիր կթարթի 2 անգամ՝ սխալը ցույց տալու համար: Փորձեք փոխել փոդը: Եթե այն կրկնվի, վերագործարկեք Ձեր VEEV ONE™ սարքը:



ՄԱՐՏԿՈՑԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Կարճ սեղմեք կոճակը, կարգավիճակի լույսերը կմիանան՝ ցույց տալու մարտկոցի մակարդակը: Երբ մարտկոցը հավասար կամ ցածր է 1%-ից, LED 1-ը թարթում է 5 անգամ: Ձեր VEEV ONE™ սարքը չի կարող օգտագործվել մինչև կրկին չլիցքավորվի:



ՎԵՐԱԳՈՐԾԱՐԿԵԼ

Սեղմեք կոճակը, պահեք այն ավելի քան 10 վայրկյան և բաց թողեք: Բոլոր լույսերը 2 անգամ կթարթեն սպիտակ՝ հաստատելով, որ սարքը վերագործարկվել է:



ՑԱԾՐ ՀԵՂՈՒԿԻ ՑՈՒՑԱՆԾՈՒՄ

Վերին սպիտակ լույսը կթարթի 5 անգամ: Ձեր VEEV ONE™ սարքը չի կարող օգտագործվել: Փոխարինեք VEEV ONE™ փողը:



ԵՐԿԱՐ ՆԵՐՔԱԾԻ ՑՈՒՑԱՆԾՈՒՄ

Եթե սարքը 2 անգամ թարթում է, դա նշանակում է, որ Դուք 5 վայրկյանից ավելի ներքաշում եք կատարել:

VEEV one

Սա անվտանգության ազդանշանն է: Այն գործարկվում է հնարավոր անսարքությունների մասին նախազգուշացնելու նպատակով:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

ԱՆՍԱՐՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԿԱՐԴԱԼ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԸ ՆԱԽՔԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ:

Սույն անվտանգության նախազգուշացումները և հրահանգները կարող են չներառել որոշ հնարավոր դեպքեր, ուստի օգտատերերը պետք է ցուցաբերեն ուշադրություն և զգուշություն:

ՀԵՏԵՎԵՔ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐԻՆ ԵՎ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻՆ, ՔԱՆԻ ՈՐ ԴՐԱՆՔ ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ

Սույն անվտանգության նախազգուշացումները և հրահանգները կիրառելի են VEEV ONE™-ի համար:

Սույն անվտանգության նախազգուշացումների և հրահանգների վերաբերյալ ցանկացած թարմացում կարող եք գտնել www.iqos.com կայքում:

Թիրախային օգտատերեր

- VEEV ONE™-ը նախատեսված է միայն չափահաս օգտատերերի համար:
- VEEV ONE™-ը և VEEV ONE™ փոդերը նախատեսված են այն չափահաս ծխողների համար, ովքեր հակառակ դեպքում կշարունակեին օգտագործել ծխախոտ կամ նիկոտին պարունակող այլ ապրանքներ:
- VEEV ONE™-ի օգտագործումը խստիվ արգելվում է երեխաներին և անչափահասներին:
- Այս ապրանքը խորհուրդ չի տրվում ֆիզիկական և մտավոր սահմանափակ կարողություններ ունեցող կամ չիրազեկված անձանց, եթե վերջինները չեն գտնվում որևէ վերահսկողության տակ կամ տեղեկացված չեն արտադրանքն անվտանգ կերպով օգտագործելու և հնարավոր ռիսկերի մասին:

Նիկոտին

- VEEV ONE™-ը պարունակում է նիկոտին, որը կախվածություն է առաջացնում:
- VEEV ONE™-ը և VEEV ONE™ փոդերը զերծ չեն ռիսկերից: Նիկոտինով պայմանավորված առողջական ռիսկերը նվազեցնելու լավագույն տարբերակը ծխախոտի և նիկոտինի օգտագործումից ընդհանրապես հրաժարվելն է:
- Որոշ օգտատերեր կարող են զգալ կողմնակի ազդեցություններ, այդ թվում՝ որովայնի ցավ, հազ, գլխապտույտ, բերանի խոռոչի չորացում, գլխացավ, տհաճություն, քթի խցանում, սրտխառնոց, կոկորդի գրգռում, փսխում:
- Նիկոտին պարունակող ապրանքները խորհուրդ չեն տրվում սրտի հիվանդություններ ունեցող կամ դրա վտանգի տակ գտնվող անձանց, շաքարային դիաբետ ունեցողներին, էպիլեպտիկներին կամ նոպաներ ունեցող անձանց:
- Նիկոտին պարունակող ապրանքների օգտագործումը խորհուրդ չի տրվում հղիության կամ կրծքով կերակրելու ընթացքում: Եթե հղի եք, կերակրում եք կրծքով, կամ կարծում եք, որ հղի եք, խորհուրդ ենք տալիս ընդհանրապես հրաժարվել ծխախոտի և նիկոտինի օգտագործումից:
- Ծխելը թողնելը կամ VEEV ONE™-ին և VEEV ONE™ փոդերին կամ նիկոտին պարունակող այլ արտադրանքներին անցնելը կարող է պահանջել որոշակի դեղամիջոցների (օրինակ՝ թեոֆիլին, կլոզապին, ռոպինիրոլ) դեղաչափի ճշգրտումներ:
- Եթե որևէ կասկած ունեք VEEV ONE™ և VEEV ONE™ փոդեր օգտագործելու առնչությամբ՝ պայմանավորված ներկայիս առողջական վիճակով, խորհուրդ ենք տալիս խորհրդակցել Ձեր բժշկի հետ:

⚠ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

⚠ԶԳՈՒՇԱՑՈՒՄ Խեղդվելու և կուլ տալու վտանգներ

• Միշտ պահեք VEEV ONE™-ը և VEEV ONE™ փոդերը երեխաների և կենդանիների համար անհասանելի վայրում:

• ԽԵՂԴՎԵԼՈՒ ՎՏԱՆԳ

— VEEV ONE™ սարքերը, աքսեսուարները և VEEV ONE™ փոդերը պարունակում են փոքր մասեր:

• ԿՈՒԼ ՏԱԼՈՒ ՎՏԱՆԳ

— VEEV ONE™ փոդերը կուլ տալու դեպքում անհապաղ դիմեք բժշկական օգնության:

— VEEV ONE™ փոդերը կուլ տալու դեպքում անհապաղ դիմեք բժշկական օգնության նիկոտինային թունավորման վտանգից խուսափելու համար:

— վեյփի հեղուկ կուլ տալու դեպքում ողողեք բերանը և դիմեք բժշկի՝ նիկոտինային թունավորման վտանգից խուսափելու համար:

⚠ ԶԳՈՒՇԱՑՈՒՄ ԷԼԵԿՏՐԱՀԱՐՄԱՆ ԿԱՄ ՄԱՐՏԿՈՑԻ ՎՆԱՍՄԱՆ ՎՏԱՆԳՆԵՐ

Էլեկտրական Ռիսկեր

Անվտանգության այս նախազգուշացումներին չհետևելը կարող է հանգեցնել հրդեհի, պայթյունի, էլեկտրահարման կամ այլ վնասվածքներ հասցնել սարքին:

- Միայն չափահասներին է թույլատրվում VEEV ONE™-ի օգտագործումը:
- Մի օգտագործեք VEEV ONE™-ն այն վայրերում, որտեղ էլեկտրոնային սարքերի օգտագործումն արգելվում է:
- Մի լիցքավորեք կամ օգտագործեք VEEV ONE™-ը կամ դրա աքսեսուարները, եթե դրանք վնասված, արտաքին ազդեցության ենթարկված կամ կոտրված են:
- Մի օգտագործեք VEEV ONE™-ը, եթե կարծում եք՝ մարտկոցը արտահոսում է:
- Լիցքավորեք VEEV ONE™-ը միայն ներսում, ինչպես ցուցադրված է ազդանշանում ⌂. լիցքավորելու համար օգտագործեք արտադրողի կողմից տրամադրվող լիցքավորման մալուխը և հավաստագրված սնուցման ադապտերը (տրամադրված տուփի մեջ կամ ձեռք բերված լիցենզավորված աղբյուրից):
- Մի օգտագործեք արտադրողի կողմից չհաստատված աքսեսուարներ: Մանրամասների համար այցելեք www.iqos.com-ի «Տեխնիկական Տվյալներ» բաժին:
- Այս ապրանքը պետք է լիցքավորվի միայն Ապահով Գերցածր Լարման 5V; 2A Սնուցման Ադապտերով: Մանրամասների համար տեսե՛ք սույն «Նախազգուշացումներ և անվտանգության հրահանգներ» փաստաթղթի «Տեխնիկական տվյալներ» բաժինը:
- Մի օգտագործեք, լիցքավորեք կամ պահեք VEEV ONE™-ը բարձր ջերմաստիճանի վայրերում (օրինակ՝ ամռանը ավտոմեքենայում, ջեռուցման աղբյուրների՝ գազօջախի կամ կրակի մոտ):

- Մի օգտագործեք լիցքավորեք կամ պահեք VEEV ONE™-ն այն վայրերում, որտեղ դյուրավառ նյութեր, հեղուկներ և գազեր են առկա:
- VEEV ONE™-ը, դրա Սնուցման Ադապտերը և Լիցքավորման լարը պետք է չառնչվեն որևէ հեղուկի հետ: Մի դիպչեք սարքին, եթե այն շփում է ունեցել որևէ հեղուկի հետ:
- Մի մաքրեք սարքը որևէ մաքրող միջոցով:
- Մի մաքրեք սարքը միացված վիճակում:
- Պարբերաբար մաքրեք VEEV ONE™-ի USB լիցքավորման միակցիչը, որպեսզի խուսափեք օտար նյութերի կուտակումից (օրինակ՝ փոշու մասնիկներից) և նախքան USB միակցիչն օգտագործելը ստուգեք այն օտար նյութերից խուսափելու համար:
- Սարքը խնամքով օգտագործեք: Մի գցեք VEEV ONE™-ը և մի ենթարկեք այն ուժեղ հարվածների:
- Այս սարքը չունի օգտագործողի կողմից սպասարկվող մասեր: Մի փորձեք բացել, փոփոխել, սպասարկել, ապամոնտաժել կամ վերանորոգել VEEV ONE™-ի որևէ բաղադրիչ կամ մարտկոցը:
- Մի օգտագործեք այս սարքը, եթե այն ենթարկվել է ծայրահեղ ցրտի, ջերմության կամ խոնավության:
- Մի դիպչեք VEEV ONE™-ին և/կամ դրա աքսեսուարներին, եթե դրանք գերտաքանան, կայծեն, ծխեն, բռնկվեն կամ այրվեն: Եթե կիրառելի է և հնարավոր է, զգուշորեն անջատեք կամ անջատեք հոսանքի աղբյուրը:
- Սարքն օգտագործեք միայն >0°C և <40°C ջերմաստիճանի միջակայքում:
- Երբեք մի նետեք VEEV ONE™-ը և/կամ դրա աքսեսուարները այլ կենցաղային թափոնների հետ, քանի որ դրանք կարող են շփվել ջրի և/կամ այլ հեղուկների հետ:

⚠ ԶԳՈՒՇԱՑՈՒՄ Մարտկոցի հետ կապված ռիսկեր

VEEV ONE™-ն աշխատում է հերմետիկ լիթիում-իոնային (Li-on) մարտկոցներով: Սովորական օգտագործման պայմաններում հերմետիկ է: Եթե նկատում եք, որ մարտկոցի հեղուկն արտահոսում է, պահպանեք հետևյալ նախազգուշական միջոցները՝

- Եթե կուլ եք տվել մարտկոցի արտահոսքի հեղուկը, անհապաղ դիմեք բժշկական օգնության: Մի ստիպեք Ձեզ փսխել կամ ուտելիք և հեղուկ օգտագործել:
- Եթե կուլ եք տվել մարտկոցի արտահոսքի հեղուկի հետևանքով

առաջացած գոլորշին, մաքուր օդ շնչեք և բժշկական օգնության դիմեք:
- Եթե շփում եք ունեցել մարտկոցից արտահոսած հեղուկի հետ, լվացեք ձեր ձեռքերը և մի դիպչեք ձեր աչքերին:
- Եթե մարտկոցից արտահոսած հեղուկը կոնտակտավորվել է Ձեր աչքերի հետ, անհապաղ ցողեք դրանք հոսող ջրով առնվազն 15 րոպե և անմիջապես դիմեք բժշկական օգնության:

⚠ ԶԳՈՒՇԱՑՈՒՄ Գրգռման Ռիսկեր

- Խուսափեք վեյփի հեղուկը մաշկին և աչքերին հպելուց:
- Եթե այն՝

  - Մաշկի հետ է կոնտակտ ունեցել, անմիջապես լվացեք օճառով և ջրով:

  - Աչքերի հետ է կոնտակտ ունեցել, մի քանի րոպե զգուշորեն լվացվեք ջրով:

  - Աղտոտել է հագուստը, լվացեք այն նախքան կրելը:

⚠ ԶԳՈՒՇԱՑՈՒՄ Ալերգիկ Ռեակցիաների Ռիսկեր

- VEEV ONE™-ի և VEEV ONE™ փոդերի օգտագործումը կարող է առաջացնել ալերգիկ ռեակցիա, օրինակ՝ դեմքի, շուրթերի, լեզվի, լնդերի, կոկորդի կամ մարմնի այտուց, շնչառության դժվարություն կամ խռպոտություն:
- Դադարեցրեք VEEV ONE™-ի և VEEV ONE™ փոդերի օգտագործումը և անհապաղ դիմեք բժշկի, եթե վերը նշված ախտանիշներից որևէ մեկը հայտնվի, քանի որ դրանք կարող են լուրջ ալերգիկ ռեակցիայի նախանշաններ լինել:

VEEV ONE™ փոդերի Օգտագործում

- Օգտագործեք VEEV ONE™-ը միայն VEEV ONE™ փոդերով, որոնք հատուկ նախատեսված են VEEV ONE™-ի համար: Երբեք մի օգտագործեք VEEV ONE™ այլ փոդերի հետ: Դա կարող է վնաս պատճառել:
- Մի փոփոխեք և մի փորձեք վերալիցքավորել VEEV ONE™ փոդերը որևէ կերպ կամ որևէ նյութ ավելացնել VEEV ONE™ փոդերի մեջ: Դա կարող է վնաս պատճառել:
- Օգտագործեք VEEV ONE™ փոդերը օրիգինալ փաթեթավորումից հեռացնելուց անմիջապես հետո:

Պահպանում

- Պահել չոր և մաքուր տեղում՝ սենյակային ջերմաստիճանում:
- Եթե փոդի կամ VEEV ONE™-ի վրա տեսնեք կաթիլներ կամ հեղուկի հետքեր՝ առանց արտահոսքի, զգուշորեն մաքրեք բոլոր հետքերը չոր շորով (ներառյալ մուշտուկը և կոնտակտները) օգտագործելուց առաջ: Մի օգտագործեք փոդը, եթե այն ակտիվորեն արտահոսում է, կամ եթե մաքրումից հետո նորից հայտնվում են կաթիլներ կամ հեղուկի հետքեր:
- Մի օգտագործեք այս ապրանքը, եթե VEEV ONE™-ի փոդը վնասված է, անսարք է, կոտրված է կամ արտահոսում է:
- Բարձրությունը փոխելիս VEEV ONE™-ի արտահոսքի ռիսկի պատճառով խորհուրդ չի տրվում արդեն բացված կամ մասամբ օգտագործված փոդերով ինքնաթիռ նստել:

Անբարենպաստ միջադեպերի մասին հաղորդում

- Եթե VEEV ONE™-ի և VEEV ONE™ փոդերի օգտագործման ընթացքում որևէ անբարենպաստ ազդեցություն եք նկատում առողջության վրա, խորհրդակցեք Ձեր բժշկի հետ:
- Կարող եք զեկուցել ցանկացած անբարենպաստ դեպքի կամ միջադեպի մասին ուղղակիորեն www.iqos.com-ի միջոցով [կամ կապվելով ձեր տեղական ինֆորմացիոն կենտրոնի հետ]:

Զեկուցելով կողմնակի ազդեցությունների մասին՝ Դուք կարող եք օգնել տրամադրել լրացուցիչ տեղեկություններ այս արտադրանքի անվտանգության մասին:

- Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք www.iqos.com:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

VEEV ONE™

Մոդել՝ M0016

Արտադրված է Չինաստանում

Մարտկոցի տեսակը՝ Li-ion վերալիցքավորվող

Մարտկոցի մուտքը՝ 5V ⎓ 2A

Նախազգուշացումների և Անվտանգության Հրահանգներում թվարկված ոչ բոլոր սարքերն են ներառված այս շարժական փաթեթում:

Էլեկտրաէներգիայի ադապտեր (ներառված չէ)

Համատեղելի մոդելներ՝ S82A40, S82A41, S82A42, S82A43, S82A45, S82A46

Մուտք՝ 100V-240V~50/60Hz 0.3A

Ելք՝ 5.0V ⎓ 2.0A

Օգտագործեք ներառված լիցքավորման լարի հետ:

ՀԵՏՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապրանքի կամ դրա փաթեթավորման վրա նշված այս սիմվոլը նշանակում է, որ այս ապրանքը և դրա մասերը (ներառյալ մարտկոցները) չպետք է թափվեն այլ կենցաղային աղբի հետ: Փոխարենը, անհրաժեշտ է հեռացնել Ձեր թափոնային սարքավորումները՝ դրանք հանձնելով էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների թափոնների հավաքման հատուկ կետ:

Օգտագործման վերջում սարքավորումները որպես չտեսակավորված կենցաղային թափոն (օրինակ՝ այրման կամ աղբավայրի միջոցով) հեռացնելը կարող է բացասական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա: Ձեր օգտագործված սարքերը վերամշակման հանձնելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք Ձեր տեղական քաղաքային գրասենյակին, Ձեր տեղական կենցաղային աղբի հեռացման ծառայությանը:

ՄԱՐՏԿՈՑԻ ՀԵՌԱՑՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ (ՀԵՌԱՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ)

Օգտատերը չպետք է հանի մարտկոցները: Սարքի օգտագործման թույլատրելի ժամկետի ավարտից հետո միայն լիազորված վերամշակողը կարող է ապահով կերպով հեռացնել մարտկոցները՝ հետևելով ստորև նշված քայլերին:

VEEV ONE™ մոդել M0016.

Քայլ 1. Ստուգեք լարումը: Նախքան ապամոնտաժելը, սարքը պետք է ամբողջությամբ լիցքաթափվի: Սեղմեք սնուցման կոճակը և ստուգեք, թե արդյոք LED-ը ցույց է տալիս ցածր լարում (ամենաներքևի LED-ը պետք է թարթի 5 անգամ); եթե ոչ, ապա սարքը պետք է լիցքաթափվի մինչև ցածր լարման ազդանշանը հայտնվի:

Քայլ 2. Հեռացրեք կիսամոդուլը պատյանից՝ այն սեղմելով USB պորտի կողքից:

Քայլ 3. Կտրեք 2 էլեկտրական լարերը կոշտ PCBA-ից

Քայլ 4. Հեռացրեք երկու պտուտակները, որոնք ամրացնում են PCBA-ն

Քայլ 5. Հեռացրեք PCBA-ն

Քայլ 6. Հեռացրեք մարտկոցը՝ բարձրացնելով այն:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ "Տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիություն" (ՄՄ ՏԿ 020/2011)

Եվրասիական տնտեսական միության "Էլեկտրատեխնիկայի և ռադիոէլեկտրոնիկայի արտադրատեսակներում վտանգավոր նյութերի կիրառումը սահմանափակելու մասին" ԵԱՏՄ ՏԿ 037/2016

Հայաստանի Հանրապետության կառավարության 10.02.2022 թ. թիվ 155 որոշմամբ հաստատված "Ծխախոտի փոխարինիչների անվտանգության մասին " տեխնիկական կանոնակարգ
Հայաստանի Հանրապետության ազգային ստանդարտ "Նիկոտինի մատակարարման էլեկտրոնային համակարգերի հեղուկներ" HST 415-2021

Նախագծված և արտադրված է Ֆիլիպ Մորրիս Փրոդաքթս ՓԲԸ վերահսկողության ներքո, Քե Ժանղենո 3, 2000 Նուշատել, Շվեյցարիա

Առաջարկությունների և բողոքների համար դիմել ներկրող կազմակերպությանը՝ "Ֆիլիպ Մորրիս Արմենիա" ՍՊԸ, ՀՀ Երևան 0010, Վ. Սարգսյան 2

© 2022 Հեղինակային իրավունք՝ Ֆիլիպ Մորրիս Փրոդաքթս ՓԲԸ